

Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի (FAST) կրթաթոշակների ծրագիրը հիմնվել է 2017թ. հոկտեմբերին: Ծրագիրը նպատակ ունի աջակցելու ազգությամբ հայ կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող տաղանդավոր ուսանողներին, որոնք ցանկություն ունեն Հայաստանի առաջատար բուհերում գիտությունների թեկնածուի աստիճանի ձեռքբերմանն ուղղված հետազոտություններ իրականացնել բնական գիտությունների, տեղեկատվական տեխնոլոգիաների, ճարտարագիտության և մաթեմատիկայի (STEM) բնագավառներում:

Ծրագրի շահառուներին տրամադրվում է ֆինանսական և ինստիտուցիոնալ աջակցություն, ինչը թույլ է տալիս լիարժեքորեն զբաղվել գիտական աշխատանքով, ապահովել գիտական շրջադարձային արդյունքներ ու ստեղծել առաջադեմ տեխնոլոգիաներ, որոնք ի գործ են առավել մեծ ազդեցություն ունենալ երկրի տնտեսության վրա:

Յուրաքանչյուր տարի գիտությունների թեկնածուի աստիճանի հավակնող ապագա ուսանողների և հայցորդների համար առաջարկվում են հետևյալ կրթաթոշակները՝

- 5 ամբողջական կրթաթոշակ՝ յուրաքանչյուրը տարեկան 7000 ԱՄՆ դոլար
- 25 մասնակի կրթաթոշակ՝ յուրաքանչյուրը տարեկան 3500 ԱՄՆ դոլար
- 10 ամբողջական կրթաթոշակ իգական սեռի ներկայացուցիչների համար՝ յուրաքանչյուրը տարեկան 7000 ԱՄՆ դոլար

Կրթաթոշակները ներառում են ուսման վարձը, կեցության ծախսերը և թոշակը:

Կրթաթոշակները շնորհվում են ամեն տարի՝ երկարացման համար դիմելու հնարավորությամբ՝ կախված դիմորդի ակադեմիական առաջադիմությունից և ընթացիկ տարում այլ պարտավորությունների կատարումից:

2018-2019 ուսումնական տարվա համար դիմումների ներկայացման վերջնաժամկետը 2018թ. մարտի 31-ն է:

Ծրագրում ներառված բուհեր

- Երևանի պետական համալսարան
- Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան

- Հայ-ռուսական համալսարան
- Հայաստանի ազգային ազրարային համալսարան
- Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա
- Ա.Բ.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)
- Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ
- Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա
- Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության գիտահետազոտական լաբորատորիաներ և կենտրոններ
- Վանաձորի պետական համալսարան
- Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան
- «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ

Ներկայացվող պահանջներ

FAST կրթաթոշակի դիմելու համար անհրաժեշտ է բավարարել հետևյալ պահանջները.

- Լինել Հայաստանի Հանրապետության քաղաքացի կամ ազգությամբ հայ
- Դիմելու ժամանակահատվածում լինել ոչ ավել քան 35 տարեկան
- Դիմում ներկայացրած լինել բուհի ասպիրանտուրա կամ գտնվել ներկայացման փուլում
- Ունենալ մագիստրոսի աստիճան՝ համապատասխան բնագավառում, և ունենալ 3.7 կամ ավելի բարձր միջին որակավորման գնահատական
- Տիրապետել անգլերենին և ունենալ օտար լեզվի իմացության ֆորմալ վկայական՝ նվազագույնը TOEFL IBT - 79, IELTS - 6.5 միավորով
- Կցել հեղինակություն վայելող գիտնականների, դասախոսների կամ նախկին գործատուների կողմից կազմված երկու երաշխավորագիր-նամակ

Հավելյալ պահանջներ ասպիրանտուրայի երկրորդ և երրորդ տարվա ուսանողների համար

- Գիտական հետազոտությունների անցկացման փորձառություն (տպագրման ներկայացված/տպագրված հոդվածների քանակը)
- Մասնագիտական փորձ
- Տպագրման ներկայացված/ տպագրված հոդվածներ, հատկապես արտասահմանյան ամսագրերում

- Հետազոտության թեմային առնչվող միջոցառումներին մասնակցություն (գիտաժողովներ, սեմինարներ և կլոր սեղաններ)
-

Անհրաժեշտ փաստաթղթեր

FAST-ին դիմելիս անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը

- Հետազոտական ծրագրի նախագիծ (առավելագույնը՝ 5 էջ, անգլերեն)
- Բուհական համապատասխան ծրագրում ներառված լինելու մասին նամակ՝ երկրորդ և երրորդ տարվա ուսանողների դեպքում
- Առնվազն երկու գրավոր նմուշ, որոնց հեղինակը բացառապես դիմողն է
- Գործողության ժամկետում գտնվող վավեր անձնագրի կամ անձը հաստատող փաստաթղթի պատճեն
- Բուհի կողմից տրված դիպլոմի միջուկ՝ 4-բալանոց համակարգի վերաձված միջին որակավորման գնահատականով
- Դիմումին ուղեկցող նամակ
- CV (անգլերեն)
- Օտար լեզվի իմացության թեստի վկայական
- Բուհի (-երի) դիպլոմների և դրանց միջուկների պատճեններ
- Երկու երաշխավորագիր-նամակ

Ոչ ռեզիդենտների կողմից ներկայացման համար անհրաժեշտ լրացուցիչ փաստաթղթեր

- Ծննդյան վկայական
 - Ազգությամբ հայ ծնողի անձնագիր
 - Մկրտության վկայական (ազգությամբ հայ լինելու մասին վկայող այլ փաստաթղթի բացակայության դեպքում)
-

Դիմումի ներկայացման և ընտրության գործընթաց

Դիմումների գնահատումից և հարցազրույցներից հետո FAST-ը ընտրված թեկնածուներին հրավիրում է ընդունող հանձնաժողովի հետ հարցազրույցի: Հարցազրույցը թեկնածուներին հնարավորություն է տալիս ներկայացնել հիմնարար հմտությունները, ունակությունները և մոտիվացիան, որոնք կրթաթոշակի ծրագրի համար առանցքային դեր ունեն: Ընդունող հանձնաժողովը կրթաթոշակի շնորհման վերաբերյալ վերջնական որոշումը կայացնում է հարցազրույցի արդյունքներից ելնելով:

Կարևոր է նշել, որ երկրորդ և երրորդ տարվա ասպիրանտ/հայցորդ հանդիսացող դիմորդների համար այլ գործընթաց է նախատեսված: Այս դիմորդները պետք է ունենան հրապարակված առնվազն մեկ գիտական աշխատանք և ուսումնական տարվա ընթացքում պետք է մասնակցած լինեն կլոր սեղանների, գիտաժողովների և սեմինարների: Դիմորդների տպագրած աշխատանքները գնահատվում են ըստ հրատարակած ամսագրի վարկանիշի, գիտական թեմային համապատասխանության և օգտագործված գրականության: Կրթաթոշակի երկարացման համար դիմորդները պետք է ներկայացնեն նոր դիմում: Ուսումնական տարվա ավարտին այս դիմորդները պետք է ներկայացնեն ավարտական հաշվետվություն: Հաշվետվության հիման վրա ընդունող հանձնաժողովը որոշում է կայացնում կրթաթոշակի երկարացման մասին:

Եթե դիմորդը չի ցանկանում շարունակել կրթաթոշակ ստանալ, ապա պետք է մինչև յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ը գրավոր դիմի հիմնադրամին՝ ներկայացնելով հրաժարվելու պատճառները:

Պարտականություններ և պատասխանատվություններ

FAST-ն ակնկալում է, որ կրթաթոշակ ստացողների աշխատանքը նորարար ծառայությունների և գիտական շրջադարձային նվաճումների միջոցով կնպաստի Հայաստանում գիտության և տեխնոլոգիաների զարգացմանը: Ակնկալվում է նաև, որ կրթաթոշակառուները ակտիվ դեր կստանան և հանդես կգան որպես FAST-ի միջազգային դեսպաններ:

Կրթաթոշակառուները պարտավորվում են.

- Կրթաթոշակառու լինելու ամբողջ ընթացքում կապ պահպանել FAST-ի հետ
- FAST-ի պահանջով մասնակցել սեմինարների, կլոր սեղանների և գիտաժողովների
- Տպագրել հոդվածներ, նախընտրելիորեն՝ Scopus և Thomson Reuters համակարգերում ընդգրկված գիտական ամսագրերում
- Ներկայացնել ակադեմիական առաջադիմության վերաբերյալ տարեկան երկու հաշվետվություն
- Խուսափել ակադեմիական խախտումներից, քանի որ դրանք կարող են հանգեցնել FAST-ի կրթաթոշակի տրամադրման անհապաղ կասեցմանը
- Սոցիալական մեդիայի օգտագործման ընթացքում պահպանել մասնագիտական էթիկայի կանոնները
- Հանդես գալ որպես FAST-ի դեսպան՝ ներկայացնելով կրթաթոշակի ծրագիրը և հիմնադրամի այլ նախագծերը՝ թվային լրատվամիջոցների, ինչպես նաև տարատեսակ ակադեմիական միջոցառումների ընթացքում

Կարիերայի հնարավորություններ

Կրթաթոշակի ծրագրի ընթացքում հիմնադրամը ստեղծում է կապերի հաստատմանը նպաստող հնարավորություններ՝ կրթաթոշակառուներին ներկայացնելով Հայաստանի առաջատար ընկերություններին և գիտահետազոտական ինստիտուտներին: Այդ հնարավորությունները թույլ են տալիս կրթաթոշակառուներին անհրաժեշտ կապեր հաստատել և սկսել կամ շարունակել մասնագիտական զարգացումը: